# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«15» հունիսի 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2023թ.-ի հունիսի 15-ին՝ ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գնի վերաբերյալ.**

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 50 375 538 |

3. **Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| **Մասնակցի անվանումը (անունը)** | **Մասնակցի գործունեության հասցեն** |
|---|---|
| ԳԱՄՇԻՆ ՍՊԸ | ք. Սևան Բաբաջանյան 1 |
| Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ | ք. Երևան, Ավան-Առինջ, 3/5 2 |
| Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն վ/2, Հույսի ավան 1թղմ, 4-րդ փ.52 |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հունիսի 23-ին՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

______________ Նորայր Աղամալյան

______________ Արմեն Ավետիսյան

______________ Տիգրան Ձեյնալյան

______________ Անդրանիկ Արզարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

«20» հունիսի 2023թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 19.06.2023թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/26-1/12074-2023 գրության (կցվում է) հիման վրա մասնակիցների կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը ստուգելու վերաբերյալ.**

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ն և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ն հայտի ապահովումները ներկայացրել են կանխիկ փողի ձևով, Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով:

Հիմք ընդունելով 19.06.2023թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/26-1/12074-2023 գրությունը՝ հանձնաժողովը որոշեց ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը ստուգելու նպատակով գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ կցելով նաև ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները հավաստող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հունիսի 23-ին՝ ժամը 16:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ Նորայր Աղամալյան

Արմեն Ավետիսյան

Տիգրան Ջեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինանս.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

№ 03/26-1/12074-2023

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ

Հայտնում ենք, որ գնման գործընթացների իրականացման շրջանակում արձանագրվել են մասնակիցների կողմից կանխիկ փողի ձևով ներկայացվող ապահովումների կեղծման դեպքեր:

Այս կապակցությամբ, հետագայում նմանատիպ դեպքերը կանխարգելելու նպատակով հայտնում ենք, որ անհրաժեշտ է.

- կանխիկ փողի ձևով հայտի, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացվելու դեպքում դրանց իսկությունը ստուգելու նպատակով ղեկավարվելով նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետով՝ գրավոր դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ կցելով նաև մասնակցի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումը հավաստող փաստաթուղթը.
- հայտերի գնահատումը շարունակել և/կամ պայմանագիրը կնքել կամ ընտրված մասնակցին զրկել պայմանագիր շնորհելու իրավունքից ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը ստանալուց հետո:

Միաժամանակ՝

- խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել պատվիրատուի համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՊՈԱԿ-ներին և հիմնադրամներին.

ՀՀ մարզպետարաններին՝ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել նաև մարզի վարչական սահմաններում գտնվող համայնքներին և վերջիններիս համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՀՈԱԿ-ներին և հիմնադրամներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

6/16/2023

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Աղաջանյան
Հեռ. (011) 800 258

Մ-9239-
19 06 23

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«23» հունիսի 2023թ.
ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Տիգրան Չեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ)

1. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակի ներկայացման, ինչպես նաև կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկության ստուգման մասին.**

1.1. Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (հայտի ապահովումը ներկայացվել է կանխիկ փողի ձևով)։

1.2. ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (հայտի ապահովումը ներկայացվել է կանխիկ փողի ձևով), **բացառությամբ՝ ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշվի՝ հավելված 2.1:**

1.3. Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (հայտի ապահովումը ներկայացվել է բանկային երաշխիքի ձևով, հայտում առկա է բանկային երաշխիքի բնօրինակից արտատված (սկանավորված) տարբերակը): Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել բանկային երաշխիքի բնօրինակը:

1.4. Հիմք ընդունելով 19.06.2023թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/26-1/12074-2023 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը ստուգելու նպատակով գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ կցելով նաև ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները հավաստող փաստաթղթերը: Ի պատասխան Դատական դեպարտամենտի 20.06.2023թ. թիվ ԴԴ-3-Ե-ԴԴ/1117-23 գրության (կցվում է)՝ 22.06.2023թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է N 12/12-2/12500-2023 գրությունը (կցվում է), որին կից տրամադրվել են ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից գանձապետական հաշիվներին վճարված գումարների վճարումները հաստատող փաստաթղթերի մեմորիալ օրդերները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

2.1. **Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի** կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ բաժնում սահմանված է, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, սակայն Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ն հայտի ապահովումը փոխանցել է «900008000664» հաշվին (ինչն արտացոլված է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունից տրամադրված մեմորիալ օրդերում), ինչպես նաև ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան. գնային առաջարկի «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարը սխալ է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ և 40-րդ կետի 4-րդ ենթակետերի պահանջները, հանձնաժողովը որոշեց Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

**2.2. ԳԱՄՇԻՆ ՍՊԸ**

- ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին,
- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• դիմում հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

• դիմում հայտարարության 2)-րդ կետում բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն» բառերը:

## 2.3. Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ

- Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին,

- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

## 3. Մասնակիցների առաջարկած գներն են.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ | | | Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ | | | ԳԱՄՇԻՆ ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 34 122 481,18 | 6 824 496,24 | **40 946 977,41** | 40 405 078 | 8 081 016 | **48 486 094** | 39 800 000 | 7 960 000 | **47 760 000** |

## 4. Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հունիսի 27-ին, ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.9-րդ կետի պահանջներով՝ հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել **ԳԱՄՇԻՆ ՍՊԸ**-ին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունիսի 26-ը** ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ______________ Նորայր Աղամալյան

______________ Արմեն Ավետիսյան

______________ Տիգրան Զեյնալյան

______________ Անդրանիկ Աբգարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Արուս Խաչատրյան

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

N ԴԴ-3-Ե-ԴԴ/1117-23 Ն-4700

«20» հունիսի 2023թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՝ պարոն Ավանեսյան,

Հիմք ընդունելով 19.06.2023թ. ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/26-1/12074-2023 գրությունը (այսուհետ՝ Գրություն)՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը ստուգելու նպատակով կից Ձեզ եմ ներկայացնում ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի և Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները հավաստող փաստաթղթերը:

Խնդրում եմ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրել Գրությամբ նշված պատասխանը:

Առդիր 2 էջ:

*Հարգանքով՝*
ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կատ.՝ Ֆինանսատնտեսական ապահովման և
գնումների համակարգման վարչություն
Հեռ.՝ 010 511 785

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝ 374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝ 15/06/2023 09:12 (UTC+04:00)

# Բյուջետային փոխանցում N 001720

| | | | |
|---|---|---|---|
| Ամսաթիվ | **15/06/2023** | Նույնացուցիչ | **dbd7d44a-0002-4701-b5ca-64598f7425c5** |
| Հաշիվ | Շահառուի հաշիվ | Գումար | |
| **1150005505540100** | **900008000466** | **AMD** | **2,520,000.00** |
| Վճարողի անվանում | **«ԳԱՄՇԻՆ» ՍՊԸ** | | |
| Վճարողի բանկ | **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ** | | |
| ՀՎՀՀ | **08607069** | | |
| Տարածաշրջանի/ՀՏ կոդ | **74** | | |
| Շահառուի անվանում | **Կենտրոնական գանձապետարանում** | | |
| Գումարը բառերով | **Երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար դրամ** | | |
| Նպատակ | **Հայտի ապահովում, ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենք** | | |

| | |
|---|---|
| Ստորագրող | Gohar Karapetyan |
| Ստորագրության կարգ | I, II |
| Ամսաթիվ | 15/06/2023 09:10:24.507 |
| Սարքի անվանում | Digipass GO ընտանիքի սարք |
| Սարքի սերիալ N | 3565603570 |
| Ստորագրություն | 696002 |

**Կատարված է**

Digitally signed by MELIKYAN GAGIK 3912890480
Date: 2023.06.15 09:13:21 AMT

## Վճարման հանձնարարական N 16109

Ամսաթիվ/Ժամ 14 հունիս 2023թ. 17:02 Կատարողի ԴԿ 3342

| | | | | |
|---|---|---|---|---|
| Վճարող | «ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | | ԴԵԲԵՏ | Գումարը(թվերով) |
| ՏՀՏ Կոդ | 99 00155226 ՀՎՀՀ | | h.N 3330806000 | 2,519,000.00 AMD |
| Վճարողի բանկը | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Եղվարդ» մասնաճյուղ<br>ք. Եղվարդ | Կոդ 22018 | | |
| Ստացող | Կենտրոնական գանձապետարան | | ԿՐԵԴԻՏ | |
| Կոդ | | | h.N | |
| Ստացողի բանկ | ՀՀ կենտրոնական բանկ<br>ք. Երևան | Կոդ 10300 | 900008000664 | |

Գումարը տառերով՝ Երկու միլիոն հինգ հարյուր տասնինը հազար Դրամ 00 լումա

Նպատակ ԴԴ-ԳՀԱԾՁԲ-23/03 ծածկագրով մրցույթի հայտի ապահովում, վավեր է 120 աշխատանքային օր

Ստացողին վճարման ամսաթիվ

Միջնորդավճար 500 ՀՀ դրամ

Կ.Տ. Հաճախորդի ստորագրությունները

Բանկը ձևակերպել է

Բանկի ստորագրությունները

Կատարման ամսաթիվ՝

14 JUN 2023

2

eFO 72-03-02/3#3

Digitally signed by KHACHATRYAN ERIK 4014960072
Date: 2023.06.14 18:15:27 AMT

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինանս.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ 000000000

№ 12/12-2/12500-2023

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան

Ի պատասխան 20.06.23 թվականի թիվ ԴԴ-3-Ե-ԴԴ/1117-23 գրության՝ կից Ձեզ ենք տրամադրում «ԳԱՄԾԻՆ» ՍՊԸ-ի և «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից գանձապետական հաշիվներին վճարված գումարների վճարումները հաստատող փաստաթղթերի մեմորիալ օրդերները:

Առդիր՝ 2 էջ:

/ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Recoverable Signature

X

ԳԱՅԱՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Signed by: BAGHDASARYAN GAYANE 6302760259

ԺԻՐԱՅՐ ՏԻՏԻԶՅԱՆ

Կատարող՝ Ի. Հարությունյան
Հեռ. 011910410

Մ-95[illegible]5
22 06 23

ՀՀ ֆինանսների նախարարություն
15/06/23
Մեմորիալ օրդեր N 230615000-017-999

| | |
|---|---|
| Դեբետ<br>Վճարող | 220183330806000<br>1/ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ<br>2/00155226 |
| Կրեդիտ<br>Ստացող | 900008000664<br>Այլ մարմիններ<br>Հայտի և պայմ.ապ.բանկ.եր.կանխ.փ |
| Գումար | 2519000.00 Արժույթ AMD<br>Երկու միլիոն հինգ հարյուր տասնինը հազար AMD 00 |
| Գին/ Փոխարժեք<br>Համարժեք | 1.00 / 1.00<br>2519000.00 |
| Վճարման նպատակը | ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03 ծածկագրով մրցույթի հայտի ապահովում, վավեր է 120 աշխատա նքային օր |

"Ա" կարգ ______________

"Բ" կարգ ______________

Կ.Տ.

ՀՀ ֆինանսների նախարարություն
15/06/23
Մեմորիալ օրդեր N 230615017-726-000

| | |
|---|---|
| Դեբետ<br>Վճարող | 1150005505540100<br>1/ՃԳԱՄՇԻՆՄ ՍՊԸ<br>2/08607069<br>8/Սեւան Բաբաջանյան 1 |
| Կրեդիտ<br>Ստացող | 900008000466<br>ՀՀ ֆինանսների նախարարութ<br>Գնում մասին օր մասնակ հայտի ապ |
| Գումար | 2520000.00 Արժույթ AMD<br>Երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար AMD 00 |
| Գին/ Փոխարժեք<br>Համարժեք | 1.00 / 1.00<br>2520000.00 |
| Վճարման նպատակը | Հայտի ապահովում, ծածկագիրը՝ ՄԴԴ-ԳՀԱՇ ՁԲ-23/03Մ Շենքերի, շինությունների ը նթացիկ նորոգման Թբիլիսյան խճուղի 3/ 9 հասցեում տեղակայված վարչական շենք |

"Ա" կարգ ______________

"Բ" կարգ ______________

Կ.Տ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ ԳՀԱՇՁԲ 23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» հունիսի 2023թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Տիգրան Չեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ)

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման նպատակով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.**

ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման նպատակով ներկայացրել է փաստաթղթեր:

Ուսումնասիրելով ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) /Հավելված 2.1/ (այսուհետ՝ Ծավալաթերթ) և գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը /Հավելված N 1/՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ Ծավալաթերթը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Ծավալաթերթի «IV. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍԵՆՔ» բաժնի 3-րդ տողում՝ «Կոյուղու խողովակների ապամոնտաժում և վերատեղադրում՝ ներառյալ ձևավոր մասերը», առկա է թվաբանական անճշտություն («Քանակը» և «Միավորի արժեքը» սյունակներում նշված թվերի արտադրյալը չի համապատասխանում «Ընդամենը» սյունակում նշված թվին), ինչի արդյունքում «IV. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍԵՆՔ» բաժնի «Ընդամենը» տողում, «Ընդամենը IV», «Չնախատեսված ծախսեր (3%)», «Ընդամենը», «ԱԱՀ (20%)», «Ընդամենը» տողերում ևս առկա են թվաբանական անճշտություններ,

- Ծավալաթերթի «Միավորի արժեքը» և «Ընդամենը» սյունակներում նշված են նաև «/ՀՀ դրամ/» բառերը, այն դեպքում, երբ մասնակցի կողմից Ծավալաթերթը ներկայացվել է «**հազար դրամ**» հաշվարկային ձևով:

Գնահատող հանձնաժողովը չի քննարկել էլեկտրոնային թվային ստորագրությամբ չհաստատված՝ Excel ձևաչափով ներկայացված՝ Հավելված 2.1:

**Հանձնաժողովը որոշեց.**

- Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար,
- ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

2. **Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.**

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց ընտրված **մասնակից ճանաչել /հայտարարել/ Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է, որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ____________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ____________ Նորայր Աղամալյան

____________ Արմեն Ավետիսյան

____________ Տիգրան Չեյնալյան

____________ Անդրանիկ Աբգարյան

____________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ____________ Արուս Խաչատրյան

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 27-ի թիվ 6 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “X”/ | Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/ | Անհամապատասխանության համառոտ նկարագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ | X | | |
| 2 | Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ | | X | Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ և 40-րդ կետի 4-րդ ենթակետերի պահանջները: |
| 3 | ԳԱՄՇԻՆ ՍՊԸ | | X | ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | րդ կետով: |

| **Մասնակիցների զբաղեցրած տեղերը** | **Մասնակցի անվանումը** | **Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/ | **Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|
| 1 | Էյչ Ընդ Էյչ ՍՊԸ | X | 40 405 078 |
| - | Խաչատրյան Քոնսթրաքշն ՍՊԸ | | 34 122 481.18 |
| - | ԳԱՄՇԻՆ ՍՊԸ | | 39 800 000 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**